

1. Կրթահամալիրի կայքի և ենթակայքերի անընդհատ վերահսկողություն: Կայքում և ենթակայքերում նոր պահանջների և գործիքների ապահովում: Wordpress պլատֆորմի վրա աշխատող ենթակայքերի (ashotbleyan.mskh.am, tv.mskh.am, itlab.mskh.am, film.mskh.am, mus.mskh.am, artschool.mskh.am, hakobhakobyan.mskh.am, partez.mskh.am, soundlab.mskh.am, artcentre.mskh.am, eco.mskh.am, lusastx.mskh.am) անընդհատ թարմացում, պաշտպանության վերահսկողություն: Նոր ենթակայքերի գրանցում, ստեղծում:
2. Կայքի վերահսկողություն yandex.metrica-ի, yandex webmaster-ի և այլ առցանց գործիքների միջոցով:
3. Սերվերային համակարգի սպասարկում: Բազաների, դոմեյնների, սարդոմեյների վերահսկողություն և սպասարկում: OSSEC անվտանգության համակարգի ամենօրյա ավտոմատ հաշվետվությունների ուսումնասիրություն:
4. Առցանց նոր գործիքների առաջարկ, պատվերի կազմակերպում, կամ ստեղծում սեփական միջոցներով:
5. Կրթահամալիրի ցանցի վերահսկողություն և անխափան աշխատանքի ապահովում և THE DUDE համակարգով և սահազանգների հիման վրա: Հիմնական երթուղիչների բազաների բեքափների պահպանում: Նոր երթուղիչների կարգավորում տեղադրում: Նոր երթուղիչների գրանցում The Dude քարտեզի վրա:
6. Աշխատանքային վիրտուալ միջավայրերի սպասարկում (փոստային համակարգ, հայտերի գրանցման համակարգ ticket system, մատենավարության one drive համակարգ):
7. ITLAB միջավայրի սպասարկում: Ծրագրային արխիվ, Play Market արխիվ և ինտերնետ օգտակար հրապարակումներ:
8. Նոր գործիքների տեղադրում և ծրագրային ապահովումների ներմուծում:
9. Համակարգչային ցանցի ֆիզիկական կազմակերպում և մոդիֆիկացիա, ցանցի անխափան աշխատանք:

Սրանք այն գործառույթներն են, որոնք այս պահին էլ իրականացվում են իմ կողմից:

Հարկ եմ համարում մանրամասնել և առաջարկել դրանց Ձեր կողմից վերահսկելի դարձնելու միջոցներ:

1. Այն ինտիլիգենտները, որոնք չեն կարողանում լուծել կայքի խմբագրիչները փորձում եմ լուծել ես: Այդպիսիք շատ են: wordpress պլատֆորմով ենթակայքերը սպասարկում և ստեղծում եմ ես, սկսած տարբեր սերվիսներում գրանցումներից, wordpress-ի տեղադրումից վերջացրած դրանց թարմացումներով, գործիքների ապահովումով, անվտանգության կազմակերպումով: Այս կետում նշված ենթակայքերը բոլորն էլ ես եմ ստեղծել: Ենթակայքերի ադմինները կարող են անգոմշաբար վնասել դրանք, էդ դեպքում էլ դիմում են իմ օգնությանը: Որ դրանց թարմացումները պարբերաբար կատարվում են կարող են փաստել ենթակայքերի խմբագրիչները: Այսօր թարմացումներ եմ արել երեք ենթակայքում: Վերջին ինտիլիգենտը, որ լուծվել է այս մասով եղել է այն, որ ԿՏԱԿ-ի համացանցից գեղարվեստի ենթակայք մուտքերն արգելափակվել էին: Այս մասի լավագույն հաշվետվությունը կարծում եմ այդ կայքերի լիարժեք աշխատանքն է (որոնցից յուրաքանչյուրում հարձակման համար արդեն սև ցուցակում են մի քանի տասնյակ IP), սակայն կարող եմ ամեն անգամ հաշվետվություն ուղարկել դրանց թարմացման մասին:

2. Yandex metrica մուտքերի մանրամասն անալիզի և կայքի խափանման դեպքում sms-ի և էլ .փոստի միջոցով զգուշացնող համակարգ է, դրանց հաշվիչները տեղադրված են կայքերում: Կայքի չգործելու դեպքում հաղորդագրությունը ստանում եմ և հեռախոսով և փոստով: webmaster-ը ավելի շատ կայքի անվասությունն ստուգիչ համակարգ է: Այստեղ կայքերը դեռ նոր եմ սկսել գրանցել: Առայժմ գրանցված են ashotbleyan.mskh.am, itlab.mskh.am և հենց mskh.am-ը: Այս կետով էլ աշխատանքն անընդհատ է: Հենց այս պահին բոլոր առցանց հակավիրուսային սկաններներն ու սև ցուցակները մեր կայքերին անվաս են ճանաչում, բացառությամբ yandex-ից, վնասակար կողմ գլխավոր ֆայլից և այլ վնասակար ֆայլեր մաքրել եմ անձամբ, այս մի քանի օրվա ընթացքում, որից հետո փոխել եմ կարևոր սերվիսների գաղտնաբառերը, սակայն քանի որ կայքը ցուցակից դուրս չի եկել, դիմել եմ այլ մասնագետների օգնությանը: Հարություն Գրաբյանի ստուգման պատասխանը կատանամ վաղը: Սարգիս Մարկոսյանին գրել եմ այսօր ուղարկելով յանդեքսի հաշվետվությունը, վաղն էլ կուղարկեմ Հարությունին: Այսպիսի ստուգումներն անընդհատ են և եթե հայտնաբերված խնդիրները չեն վնասել կայքը, դրանցով փորձում եմ Ձեզ չանհանգստացնել: Metrica-ի անալիզները մուտքերի, նոր հաճախորդների, շաբաթական փոփոխությունների և այլնի մասին հասանելի է հենց կայքից, հաշվիչի վրայի հղումից, առանց մուտք գործելու համակարգ, այդ պատճառով դրանք առանձին հրապարակելն անիմաստ է: Խափանումների մասին նամակով կհայտնեմ անմիջապես Ձեզ:
3. OSSEC անվտանգության համակարգից հարձակումների և այլ խնդիրների մասին ավտոմատ մոտ տասից տասնհինգ նամակ եմ ստանում, որոնք հերթով ուսումնասիրում եմ: Արդեն չօգտագործվող ենթակայքերի բազաները, դրանց յուզերները տարատեսակ գրառումները անընդհատ ստուգվում և ջնջվում են: Այսպիսի գործողությունն վերջին անգամ արել եմ մեկ շաբաթ առաջ: Բազաների պահեստային արխիվացումը (back up) ստուգում եմ շաբաթը մեկ կամ երկու անգամ, չնայած, որ դրանք ավտոմատ ամեն օր արխիվացվում և պահվում են երկու տեղում, ստուգելիս ես դրանք ներբեռնում եմ նաև սպասարկման համար սերվերային տարածքում տեղադրված նոթբուքի վրա: Վերջին ներբեռնումն արել եմ երկու օր առաջ
4. Առցանց նոր գործիքների ստեղծումը անընդհատ ու ամեն օր չի սակայն տեղեկացնում, որ այս պահին տեղադրված է գրադարանի կառավարման համակարգը, որում հիմա գնում են գրքերի և բաժանորդների հսկայական բազայի գրանցումը: Իմ մասով մնացել է թարգմանել որոշ դաշտեր, որոնք դեռ անգլերեն են (դրանց թարգմանության հետ մի փոքր դժվարությունների էի հանդիպել) և կազմակերպել տարատեսակ հաշվետվությունների հայատատ արտահանումը excel փաստաթղթով, այլ ֆորմատով արդեն կազմակերպված է: Կրթական գործընթացի մենեջմենթի համակարգը lms.mskh.am արդեն տեղադրված է և մոտենում է ավարտին: Աշխատավարձերի հաշվետվության համակարգի ձևը ընտրված է, սակայն այն կազմակերպելիս հանդիպեցինք օպերացիոն համակարգի փոխելու կարիքին: Քանի որ մոտ մեկ կամ երկու օր համակարգիչը պետք է զբաղեցնենք, տիկին Գրետայի հետ երեկ պայմանավորվել ենք աշխատանքները շարունակել ավանսների հաշվարկն ավարտելուց հետո:
5. Ցանցի սպասարկումը անընդհատ է: Այն պահանջում է և առցանց սպասարկում և աշխատանքներ խնդրի տեղում: Այս մասով վերջին անհազանգը երեկ էր, նոր դպրոցից:

6. Այս կետով աշխատանքն ավելի շատ ըստ դիմումների է: Վերջին դիմումը եղել է այսօր b4-ի գրասենյակից կապված onedrive-ի սինխրոնիզացիայի հետ:
7. ITLab-ը պարզապես բլոգ կամ ենթակայք չէ: Այնտեղ կազմակերպված է ծրագրային ապահովումների արխիվ, որը պարբերաբար թարմացվում է: Ինչպես նաև ինչպես պայմանավորվել էինք, պլանշետների համար ստեղծել եմ անմիջապես Google-ի playmarket-ի հետ անմիջապես կապված ծրագրային ապահովումների բաժին, որը նույնպես անընդհատ սպասարկման և նոր ծրագրերի առաջարկներով ապահովվելու կարիք ունի:
8. Այս կետով վերջին աշխատանքը եղել է Գնել Հարությունյանի մոտ եռաչափ տպիչի համար անհրաժեշտ UBUNTU օպերացիոն համակարգի տեղադրումն ու կարգավորումը: Շատ դասավանդողներ էլ իրենց նյութերից շատերը ստեղծում են իմ կողմից առաջարկված ծրագրային ապահովումներով:
9. Այս կետի աշխատանքները կատարվում են Սեն Միքայելյանի հետ համատեղ: Ելնելով այդ աշխատանքների բնույթից: Վերջին աշխատանքները կատարվել են նախկին ջերմոցում և գեղարվեստում:

## **Աշխատանքները վերահսկելի դարձնելու նպատակով**

Խնդրում ենք ծրագրի ղեկավարները համարակալեն իրենց դպրոցի կաբինետները հերթական համարներով և ուղարկեն այդ կաբինետի ղեկավարների ցուցակը:

Հայտերը լրացնել ITLab-ում տեղադրված սպասարկման համակարգով, որի հաշվետվությունը կհրապարակենք ամեն ամիս:

ITLab-ում տեղադրված է աղյուսակ [http://itlab.mskh.am/?page\\_id=254](http://itlab.mskh.am/?page_id=254), որը կապված է սքայդրայվում տեղադրված ֆայլի հետ: Այն կենթարկենք մի փոքր փոփոխության: Կգրանցենք ամեն կաբինետի թվային միջոցները, ու ամեն անգամ ֆիքսենք կատարված աշխատանքը, որն էլ առցանց անընդհատ տեսանելի կլինի:

Եթե կան գործառույթներ և պարտականություններ, որոնք մենք չենք նշել, բայց գործատուն անհրաժեշտ է համարում խնդրում եմ կատարեք լրացումներ: